

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

2011 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ
ԾՐԱԳԻՐ

Բովանդակություն

Ներածություն

I. Տնտեսական մրցակցության իրավիճակի վերլուծությունը և առկա հիմնախնդիրների բացահայտումը,

II. Տնտեսական մրցակցության պաշտպանության միջոցառումները և դրանց իրականացման ժամանակացույցը,

III. Տնտեսական մրցակցության կարգավորման մեխանիզմները,

IV. Օրենքով սահմանված խնդիրների և գործառույթների իրականացման համար անհրաժեշտ այլ դրույթներ:

Ներածություն

Հայաստանի Հանրապետության տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 2011 թվականի տարեկան գործունեության ծրագիրը (այսուհետ՝ Ծրագիր) համաձայն «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով (այսուհետ՝ Օրենք) սահմանված նպատակի և Հանձնաժողովի ռազմավարական խնդիրների իրականացման հրամայականի՝ ամրագրում է տնտեսական մրցակցության իրավիճակի վերլուծությունը, Հանձնաժողովի կողմից 2011 թվականի ընթացքում իրականացվելիք մրցակցային քաղաքականության գերակա ուղղությունները, առկա հիմնախնդիրների հիման վրա սահմանում է ապրանքային շուկաներում մրցակցության խթանման համար անհրաժեշտ միջոցառումները, արդի պայմաններում մրցակցության խրախուսմանն ու զարգացմանն ուղղված կարգավորման մեխանիզմները:

Ծրագիրն ապահովում է Հանձնաժողովի 2002-2010 թվականների տարեկան գործունեության ծրագրերի շարունակականությունը:

I. Տնտեսական մրցակցության իրավիճակի վերլուծությունը և առկա հիմնախնդիրների բացահայտումը

Հանձնաժողովն իր գործունեությունն իրականացնում է ապրանքային շուկաներում տնտեսվարող սուբյեկտների կողմից տնտեսական մրցակցությունը սահմանափակող գործողությունների, մասնավորապես՝ գերիշխող դիրքի չարաշահման, հակամրցակցային համաձայնությունների, անբարեխիղճ մրցակցության դրսևորումների կանխման և արգելման ուղղությամբ: Տնտեսության մրցակցային իրավիճակը, մասնավորապես՝ ապրանքային շուկայի համակենտրոնացման աստիճանը, մասնակիցների թիվը, գերիշխող դիրքի առկայությունը Հանձնաժողովի կողմից գնահատվել է ապրանքային շուկաների ուսումնասիրությամբ և նախորդ տարիներին ուսումնասիրված շուկաների դիտանցմամբ: Հանձնաժողովը 2010 թվականի հունվարից մինչև սեպտեմբերն ընկած ժամանակահատվածում ուսումնասիրել է **41** ապրանքային շուկա (**աղյուսակներ 1,2,3**), և դիտանցում է իրականացրել գերիշխող դիրք ունեցող տնտեսվարող սուբյեկտների կենտրոնացված գրանցամատյանում գրանցված մոտ 115 ապրանքային շուկաներում

(օգտագործելով նաև գերիշխող դիրք ունեցող տնտեսվարող սուբյեկտների կողմից տրամադրված տվյալները):

Մրցակցային իրավիճակի ուսումնասիրության համար ապրանքային շուկաների ընտրությունն իրականացվել է՝ հիմք ընդունելով նախորդ տարում ուսումնասիրության ժամանակ առաջացած խնդիրները, հատկապես գերիշխող դիրքի վերանայման վերաբերյալ տնտեսվարող սուբյեկտների դիմումները, գերիշխող դիրք ունեցող կամ խոշոր ընկերությունների լուծարման փաստը: Հանձնաժողովի կողմից իրականացվել է նաև մի շարք նոր ապրանքային շուկաների կառուցվածքի ուսումնասիրություն, որոնց ընտրության համար հաշվի է առնվել դրանց սոցիալական նշանակությունը: 2010 թվականին ուսումնասիրված ապրանքային շուկաներում մրցակցային իրավիճակը ներկայացված է աղյուսակներ 1, 2, 3-ում:

Մի շարք պարենային ապրանքային շուկաների առաջատար սուբյեկտները և մրցակցային իրավիճակը բնութագրող առանձին ցուցանիշները

Աղյուսակ 1

Հ/Հ	Ապրանքային շուկայի անվանումը	Ուսումնասիրված ժամանակահատվածը	Առաջատար դիրք ունեցող տնտեսվարող սուբյեկտի		Մրցակցային շուկայի մասնակիցների թիվը	Կենտրոնացվածության աստիճանը***	
			անվանումը	բաժինը (%)		տոկոսը	նյութն
1	«Շաքարավազ»	2009թ	«Ալեքս Գրիգ» ՍՊԸ*	99.99	6	99.99	բարձր
2	«Արևածաղկի և եգիպտացորենի բուսական յուղ (ձեթ)»	2009թ	«Ալեքս Գրիգ» ՍՊԸ*	37.5	36	63.8	միջին
3	«Զիթապտղի բուսական յուղ (ձեթ)»	2009թ	«Վեգեքոմ» ՍՊԸ*	66.0	14	88.0	բարձր
4	«Կարագ»	2009թ	«Ալեքս Գրիգ» ՍՊԸ*	35.04	20	67.59	միջին
5	«Բնական հյութեր»	2009թ 1 կիս	«Սարգիս Կարոլինա» ՍՊԸ	26.9	28	57.6	միջին
6	«Բրինձ»	2009թ	«Ալեքս Գրիգ» ՍՊԸ	33.6	27	62.8	միջին
7	«Ցորենի ալյուր»	2009թ	«Ալեքս Գրիգ» ՍՊԸ**	47.3	51	87.6	բարձր
			«Սանանա գրեյն» ՍՊԸ**	34.4			
8	«Պահածոյացված ձիթապտուղ»	2009թ	«Վեգեքոմ» ՍՊԸ*	56.3	21	89.0	բարձր
9	«Սառեցրած ձկներ»	2009թ	«Սոկոնաթ» ՍՊԸ*	33.55	20	62.4	միջին
10	«Խտացրած կաթ»	2009թ	«Ֆելիքս Սարգ» ՍՊԸ*	40.1	17	74.0	բարձր
11	«Մայոնեզ»	2009թ	«Մելիքս ՋՄ» ՍՊԸ*	52.8	20	87.3	բարձր
12	«Հավի ձու՝ կճեպով»	2010թ I կիս	«Արաքս թոչնաբուծական ֆաբրիկա» ՓԲԸ և «Երևանի թոչնաբուծական ֆաբրիկա» ԲԲԸ անձանց խումբ**	29.2	6	80.6	բարձր
			«Լուսակերտի տոհմային թոչնաբուծական ֆաբրիկա» ՍՊԸ**	26.1			

*տնտեսվարող սուբյեկտն ապրանքային շուկայում համարվել է գերիշխող դիրք ունեցող, իրացման ծավալներով գրավում է ապրանքային շուկայի առնվազն մեկ երրորդը:

** տնտեսվարող սուբյեկտներից յուրաքանչյուրը տվյալ ապրանքային շուկայում համարվել է գերիշխող դիրք ունեցող, իրացման ծավալներով միասին գրավում են տվյալ շուկայի առնվազն մեկ երկրորդը:

*** Շուկան ունի կենտրոնացվածության բարձր աստիճան, եթե 70%<CR-3<100%, միջին աստիճան՝ եթե 45%<CR-3<70%, ցածր աստիճան՝ եթե CR-3<45%: CR-3-ը տվյալ շուկայի իրացման ընդհանուր ծավալում առավել խոշոր երեք տնտեսվարող սուբյեկտների բաժինների գումարն է:

2010 թվականին Հանձնաժողովն ուսումնասիրել է 12 պարենային ապրանքների ապրանքային շուկաներ, որոնցից 7 ապրանքային շուկաներ բարձր կենտրոնացված են, կենտրոնացվածության աստիճանը 74.0-99.99 տոկոսի սահմաններում է: Ուսումնասիրված ապրանքային շուկաներում մասնակիցների թիվը տատանվում է 6-ից («Հավի ձու՝ կճեպով» և «Շաքարավազ» ապրանքային շուկաներ) մինչև 51-ը («Ցորենի այլուր» ապրանքային շուկա): Ապրանքային շուկաներից 5-ը միջին կենտրոնացված են, որտեղ կենտրոնացվածության աստիճանը կազմում է 57.6-ից մինչև 67.6 տոկոս, իսկ մասնակիցների թիվը 20-ից («Կարագ» և «Սառեցված ձկներ» ապրանքային շուկաներ) մինչև 36 («Արևածաղկի և եգիպտացորենի բուսական յուղ (ձեթ)» ապրանքային շուկա): Ապրանքային շուկաներից 11-ում գործում են գերիշխող դիրք ունեցող տնտեսվարող սուբյեկտներ: Ընդ որում, մեկ ապրանքային շուկայում գործում են երկու տնտեսվարող սուբյեկտներ («Ցորենի այլուր» ապրանքային շուկա), իսկ մեկ ապրանքային շուկայում երկու տնտեսվարող սուբյեկտներ միասին զբաղեցնում են գերիշխող դիրք:

Մի շարք ոչ պարենային ապրանքային շուկաների առաջատար սուբյեկտները և մրցակցային իրավիճակը բնութագրող առանձին ցուցանիշները

Աղյուսակ 2

Հ/Հ	Ապրանքային շուկայի անվանումը	Ուսումնասիրված ժամանակահատվածը	Առաջատար դիրք ունեցող տնտեսվարող սուբյեկտի		Ապրանքային շուկայի մասնակիցների թիվը	Կենտրոնացվածության աստիճանը***	
			անվանումը	բաժինը (%)		տոկոսը	աստիճանը
1	«Լամինացված մանրահատակ»	2009թ	«Իմքս գրուպ» ՍՊԸ	20.8	54	42.6	ցածր
2	«Ջրի սառեցման-տաքացման սարքեր»	2009թ	«ՄԳԱ Վոթըր» ՍՊԸ*	47.03	40	67.27	միջին
3	«Մարդատար ավտոմեքենաների նոր անվադողեր»	2009թ	«Բելոուս» ՍՊԸ**	26.29	36	66.69	միջին
			«Մեծ Անիվ» ՍՊԸ**	22.18			
			«Ավտոշեն» ՍՊԸ**	18.22			
4	«Պատի երեսպատման սալիկներ»	2009թ	«Իմքս գրուպ» ՍՊԸ	26.2	23	53.3	միջին
5	«Հատակի երեսպատման սալիկներ»	2009թ	«Իմքս գրուպ» ՍՊԸ	28.6	24	50.8	միջին
6	«Դիզելային վառելիք»	2009թ II կիս	«Ֆլեշ» ՍՊԸ*	47.3	7	95.1	բարձր
			«Սիթի Պետրոլ գրուպ» ՍՊԸ*	40.8			
7	«Բենզին»	2009թ II կիս	«Ֆլեշ» ՍՊԸ*	42.3	5	93.9	բարձր
			«Սիթի Պետրոլ գրուպ» ՍՊԸ*	41.8			

*տնտեսվարող սուբյեկտն ապրանքային շուկայում համարվել է գերիշխող դիրք ունեցող, իրացման ծավալներով գրավում է ապրանքային շուկայի առնվազն մեկ երրորդը:

** տնտեսվարող սուբյեկտներից յուրաքանչյուրը տվյալ ապրանքային շուկայում համարվել է գերիշխող դիրք ունեցող, իրացման ծավալներով միասին գրավում են տվյալ շուկայի առնվազն մեկ երկրորդը:

*** Շուկան ունի կենտրոնացվածության բարձր աստիճան, եթե 70%<CR-3<100%, միջին աստիճան՝ եթե 45%<CR-3<70%, ցածր աստիճան՝ եթե CR-3<45%: CR-3-ը տվյալ շուկայի իրացման ընդհանուր ծավալում առավել խոշոր երեք տնտեսվարող սուբյեկտների բաժինների գումարն է:

Հանձնաժողովն ուսումնասիրել է նաև ոչ պարենային ապրանքների 7 ապրանքային շուկաներ, որոնցից երկու ապրանքային շուկաներ բարձր կենտրոնացված են՝ կենտրոնացվածության աստիճանը կազմում է 93.9-ից մինչև 95.1 տոկոս, իսկ մասնակիցների թիվը՝ 5-ից («Բենզին» ապրանքային շուկա) մինչև 7 տնտեսվարող սուբյեկտներ («Իրգելային վառելիք» ապրանքային շուկա): Ապրանքային շուկաներից 4-ը միջին կենտրոնացված են, կենտրոնացվածության աստիճանը տատանվում է 50.8-ից մինչև 67.3 տոկոս, իսկ մասնակիցների թիվը կազմում է 23-ից («Պատի երեսպատման սալիկներ» ապրանքային շուկա) մինչև 40 («Ջրի սառեցման-տաքացման սարքեր» ապրանքային շուկա) տնտեսվարող սուբյեկտներ: Մեկ ապրանքային շուկա ցածր կենտրոնացված է, որտեղ կենտրոնացվածության աստիճանը 42.6 տոկոս է, իսկ մասնակիցները թիվը՝ 54 տնտեսվարող սուբյեկտ: Ուսումնասիրված ապրանքային շուկաներից չորսում առկա են գերիշխող դիրք ունեցող տնտեսվարող սուբյեկտներ: Ընդ որում, դրանցից մեկում առկա է մեկ գերիշխող դիրք ունեցող տնտեսվարող սուբյեկտ, երկու ապրանքային շուկաներում գործում են երկուական տնտեսվարող սուբյեկտներ, որոնցից յուրաքանչյուրը առանձին զբաղեցնում է գերիշխող դիրք, իսկ «Մարդատար ավտոմեքենաների նոր անվադողեր» ապրանքային շուկայում երեք տնտեսվարող սուբյեկտներ միասին զբաղեցնում են գերիշխող դիրք: Մնացած երեք ապրանքային շուկաներում գերիշխող դիրք զբաղեցնող տնտեսվարող սուբյեկտներ չկան:

Դեղերի շրջանառության ոլորտի ապրանքային շուկաների առաջատար սուբյեկտները և մրցակցային իրավիճակը բնութագրող առանձին ցուցանիշները

Աղյուսակ 3

Հ/Հ	Ապրանքային շուկայի անվանումը	Ուսումնասիրված ժամանակահատվածը	Առաջատար դիրք ունեցող տնտեսվարող սուբյեկտի		Ապրանքային շուկայի մասնակիցների թիվը	Կենտրոնացվածության աստիճանը***	
			անվանումը	բաժինը (%)		տոկոսը	աստիճանը
1	«Անզգայացնող դեղեր»	2009թ 9 ամ.	«Էսզեթ ֆարմա» ՍՊԸ	20.0	17	53.0	միջին
2	«Ցավազրկող, տենդամարիչ, ոչ ստերիոդային հակաբորբոքային դեղեր, ռևմատիկ բարդությունների ժամանակ կիրառվող ձևափոխիչներ»	2009թ 9 ամ.	«Առգո-ֆարմ» ՍՊԸ	25.0	29	56.0	միջին
3	«Ալերգիայի, անաֆիլաքսիայի ժամանակ կիրառվող դեղեր»	2009թ 9 ամ.	«Ֆարմատեք» ՍՊԸ*	36.7	20	61.8	միջին
4	«Հակացնցումային դեղեր»	2009թ 9 ամ.	«Նատալի ֆարմ» ՍՊԸ**	54.4	13	75.9	բարձր

			«Ալֆա ֆարմ» ՓԲԸ**				
5	«Հակավարակային դեղեր»	2009թ 9 ամ.	«Ֆարմատեք» ՍՊԸ	31.1	25	52.5	միջին
6	«Հակամիզրենային դեղեր»	2009թ 9 ամ.	«Ալֆա ֆարմ» ՓԲԸ*	80.2	8	91.02	բարձր
7	«Հակապարկինստնային դեղեր»	2009թ 9 ամ.	«Նատալի ֆարմ» ՍՊԸ	28.0	8	62.0	միջին
8	«Արյան վրա ազդող դեղեր»	2009թ 9 ամ.	«Նյու ինտերնեյշնլ բիզնես ֆարմ» ՍՊԸ*	35.5	18	74.5	բարձր
9	«Արյան պատրաստուկներ, պլազմայի փոխարինիչներ»	2009թ 9 ամ.	«Քոմստար» ՍՊԸ*	55.3	3	100.0	բարձր
			«Լիկվոր» ՓԲԸ*	40.3			
10	«Միքտանոթային դեղեր»	2009թ 9 ամ.	«Արֆարնացիա» ՍՊԸ	19.03	30	43.0	ցածր
11	«Մաշկային հիվանդությունների դեպքում կիրառվող դեղեր (տեղային)»	2009թ 9 ամ.	«Ֆարմատեք» ՍՊԸ*	47.0	23	63.3	միջին
12	«Վարակազերծիչներ և հականեխիչ միջոցներ»	2009թ 9 ամ.	«Ջեյ վի էս մեդիսպորտ» ՍՊԸ*	33.47	17	66.3	միջին
13	«Միզամուղներ»	2009թ 9 ամ.	«Ռիխտեր Լամբրոն» ՀԶ ՍՊԸ և «Լամբրոն ֆարմիսպեքս» ՍՊԸ անձանց խումբ*	47.6	11	75.1	բարձր
14	«Ստամոքսաաղիքային դեղեր»	2009թ 9 ամ.	«Նատալի ֆարմ» ՍՊԸ	17.6	27	41.0	ցածր
15	«Հորմոններ, այլ ներզատային դեղեր, հակաբեղմնավորիչներ»	2009թ 9 ամ.	«Ալֆա ֆարմ» ՓԲԸ	28.18	18	57.48	միջին
16	«Իմունաբանական դեղեր»	2009թ 9 ամ.	«Ֆարմ-Գոհար» ՍՊԸ	32.3	14	58.84	միջին
17	«Մկանային ապալարիչներ (ծայրանոթամային ազդեցության) խոլինէսթերազի արգելակիչներ»	2009թ 9 ամ.	«Ռիխտեր Լամբրոն» ՀԶ ՍՊԸ և «Լամբրոն ֆարմիսպեքս» ՍՊԸ անձանց խումբ*	49.03	10	71.49	բարձր
18	«Ակնաբուժական դեղեր»	2009թ 9 ամ.	«Լիկվոր» ՓԲԸ	29.8	19	59.2	միջին
19	«Արգանդակծկիչներ և արգանդաթուլացնողներ»	2009թ 9 ամ.	«Ռիխտեր Լամբրոն» ՀԶ ՍՊԸ և «Լամբրոն ֆարմիսպեքս» ՍՊԸ անձանց խումբ*	65.2	6	85.6	բարձր
20	«Հոգեմետ դեղեր»	2009թ 9 ամ.	«Արֆիմեդ» ՍՊԸ**	51.5	13	66.1	միջին
			«Ալֆա ֆարմ» ՓԲԸ**				
21	«Շնչառական համակարգի վրա ազդող դեղեր»	2009թ 9 ամ.	«Ֆարմատեք» ՍՊԸ*	39.2	16	61.2	միջին
22	«Զրաաղային, թթվահիմնային հավասարակշռությունը կարգավորող լուծույթներ»	2009թ 9 ամ.	«Ֆարմատեք» ՍՊԸ*	54.9	10	94.8	բարձր
			«Լիկվոր» ՓԲԸ*	33.6			

*տնտեսվարող սուբյեկտն ապրանքային շուկայում համարվել է գերիշխող դիրք ունեցող, իրացման ծավալներով գրավում է ապրանքային շուկայի առնվազն մեկ երրորդը:

** տնտեսվարող սուբյեկտներից յուրաքանչյուրը տվյալ ապրանքային շուկայում համարվել է գերիշխող դիրք ունեցող, իրացման ծավալներով միասին գրավում են տվյալ շուկայի առնվազն մեկ երկրորդը:

*** Շուկան ունի կենտրոնացվածության բարձր աստիճան, եթե 70%<CR-3<100%, միջին աստիճան՝ եթե 45% <CR-3<70%, ցածր աստիճան՝ եթե CR-3<45%: CR-3-ը տվյալ շուկայի իրացման ընդհանուր ծավալում առավել խոշոր երեք տնտեսվարող սուբյեկտների գումարն է:

Նշված ապրանքային շուկաների ուսումնասիրության արդյունքներից երևում է, որ 2 ապրանքային շուկա ցածր կենտրոնացված են (կենտրոնացվածության աստիճանը

կազմում է 41.0-43.0 տոկոս, մասնակիցների թիվը 27-ից մինչև 30 տնտեսվարող սուբյեկտ), 12 ապրանքային շուկա՝ միջին կենտրոնացված (կենտրոնացվածության աստիճանը կազմում է 52.5-66.3 տոկոս, մասնակիցների թիվը 8-ից 29-ը), 8-ը՝ բարձր կենտրոնացված (կենտրոնացվածության աստիճանը կազմում է 71.49-100 տոկոս, մասնակիցների թիվը 3-ից 18-ը): Նշված ապրանքային շուկաներից 13-ում թվով տասնյոթ տնտեսվարող սուբյեկտներ համարվել են գերիշխող դիրք ունեցող: Ընդ որում, երկու ապրանքային շուկաներում երկուական տնտեսվարող սուբյեկտներ իրացման ծավալներով միասին գրավում են տվյալ շուկայի առնվազն մեկ երկրորդը: 11 ապրանքային շուկաներում գործում է գերիշխող դիրք ունեցող 1 տնտեսվարող սուբյեկտ:

Հաշվի առնելով վերը նշվածը՝ կարելի է եզրակացնել, որ ուսումնասիրված ապրանքային շուկաները մեծամասամբ բարձր և միջին կենտրոնացված են, ցածր կենտրոնացված շուկաներ հազվադեպ են հանդիպում: Աղյուսակ 4-ում և զծանկարներ 1-ում և 2-ում ներկայացված են նախկինում ուսումնասիրված մի շարք ապրանքային շուկաների մրցակցային իրավիճակը բնութագրող առանձին ցուցանիշների դինամիկան:

Նախկինում ուսումնասիրված մի շարք ապրանքային շուկաների մրցակցային իրավիճակը բնութագրող առանձին ցուցանիշների դինամիկան



Աղյուսակ 4

Հ/Հ	Ապրանքային շուկայի անվանումը	Ապրանքային շուկայի մասնակիցների թիվը		Ապրանքային շուկաների կենտրոնացվածության աստիճանը			
				տոկոսը		աստիճանը	
		նախորդ ուսումն.	վերջին ուսումն.	նախորդ ուսումն.	վերջին ուսումն.	նախորդ ուսումն.	վերջին ուսումն.
1.	«Ցորենի պյուր»	43	51	78.9	87.6	բարձր	բարձր
2.	«Շաքարավազ»	21	6	99.9	100.0	բարձր	բարձր
3.	«Կարագ»	23	20	84.1	67.6	բարձր	միջին
4.	«Հավի ձու՝ կճեպով»	12	6	85.9	80.6	բարձր	բարձր
5.	«Սառեցրած ձկներ»	11	20	72.3	62.3	բարձր	միջին
6.	«Բրինձ»	19	28	66.6	62.8	միջին	միջին
7.	«Մարդատար ավտոմեքենաների նոր անվադողեր»	60	36	46.6	66.7	միջին	միջին
8.	«Բենզին»	7	5	89.9	93.9	բարձր	բարձր
9.	«Դիզելային վառելիք»	11	7	76.3	95.1	բարձր	բարձր

Աղյուսակ 4-ում ներկայացված է նախկինում ուսումնասիրված մի շարք ապրանքային շուկաների մրցակցային իրավիճակը բնութագրող առանձին ցուցանիշների

համեմատությունը: Նախորդ ուսումնասիրության արդյունքում նշված շուկաներից 7-ը բարձր կենտրոնացված էին (կենտրոնացվածության աստիճանը 72.3-99.9 տոկոս), 2-ը միջին կենտրոնացված (կենտրոնացվածության աստիճանը 46.6-66.6 տոկոս), իսկ ցածր կենտրոնացված ապրանքային շուկա չկար: Ութ ապրանքային շուկաներում առկա էին գերիշխող դիրք զբաղեցնող տնտեսվարող սուբյեկտներ և միայն մեկ ապրանքային շուկայում՝ «Մարդաստար ավտոմեքենաների նոր անվադողեր» գերիշխող դիրք ունեցող տնտեսվարող սուբյեկտ չկար: Ընդ որում, 5 ապրանքային շուկաներում առկա էր գերիշխող դիրք ունեցող մեկ տնտեսվարող սուբյեկտ, երկու ապրանքային շուկաներում առկա էին երկու գերիշխող դիրք ունեցող՝ յուրաքանչյուրը առանձին, իսկ մեկ ապրանքային շուկայում՝ երկու տնտեսվարող սուբյեկտներ համարվել էին համատեղ գերիշխող դիրք ունեցող:

Այս տարվա ընթացքում իրականացված ուսումնասիրության արդյունքներով 5 ապրանքային շուկաներ բարձր կենտրոնացված են (կենտրոնացվածության աստիճանը կազմում է 80.6-99.9 տոկոս), 4-ը՝ միջին կենտրոնացված (կենտրոնացվածության աստիճանը կազմում է 62.3-67.6 տոկոս): Ցածր կենտրոնացված ապրանքային շուկա չկա: Բոլոր 9 ապրանքային շուկաներում առկա են գերիշխող դիրք ունեցող տնտեսվարող սուբյեկտներ, որոնցից 4 ապրանքային շուկաներում առկա է գերիշխող դիրք ունեցող մեկ տնտեսվարող սուբյեկտ, երեք ապրանքային շուկաներում առկա են երկու գերիշխող դիրք ունեցող՝ յուրաքանչյուրը առանձին, մեկ ապրանքային շուկայում երկու տնտեսվարող սուբյեկտներ համարվել են համատեղ գերիշխող դիրք ունեցող, իսկ մյուս ապրանքային շուկայում երեք տնտեսվարող սուբյեկտներ համարվել են համատեղ գերիշխող դիրք ունեցող: Ինչ վերաբերում է մասնակիցների թվին, ապա նրանց թվի նվազում է նկատվում: Եթե նախորդ ուսումնասիրության արդյունքում բոլոր ապրանքային շուկաներում մասնակիցների թիվը կազմում էր 207 տնտեսվարող սուբյեկտ, ապա այս տարվա ընթացքում իրականացված ուսումնասիրության արդյունքներով՝ կազմել է 179 տնտեսվարող սուբյեկտ: Ընդ որում, «Ցորենի այլուր», «Սառեցված ձկներ» և «Բրինձ» ապրանքային շուկաներում մասնակիցների թիվը ավելացել է համապատասխանաբար 8, 9 և 9 տնտեսվարող սուբյեկտով, մնացած 6 ապրանքային շուկաներում մասնակիցների թիվը նվազել է առնվազն 2, իսկ առավելագույնը՝ 24 տնտեսվարող սուբյեկտով:



Դեղերի շրջանառության ոլորտի մի շարք ապրանքային շուկաների մրցակցային իրավիճակը բնութագրող առանձին ցուցանիշների դինամիկան ներկայացված է աղյուսակ 5-ում և գծանկարներ 3-ում և 4-ում:

Դեղերի շրջանառության ոլորտի մի շարք ապրանքային շուկաների մրցակցային իրավիճակը բնութագրող առանձին ցուցանիշների դինամիկան

Աղյուսակ 5

Հ/Հ	Ապրանքային շուկայի անվանումը	Ապրանքային շուկայի մասնակիցների թիվը		Ապրանքային շուկաների կենտրոնացվածության աստիճանը			
				տոկոսը		աստիճանը	
		նախորդ ուսումն.	վերջին ուսումն.	նախորդ ուսումն.	վերջին ուսումն.	նախորդ ուսումն.	վերջին ուսումն.
1.	«Անզգայացնող դեղեր»	23	17	47.54	53.0	միջին	միջին
2.	«Ցավագրկող, տենդամարիչ, ոչ ստերիոդային հակաբորբոքային դեղեր, ռևմատիկ բարդությունների ժամանակ կիրառվող ձևափոխիչներ»	34	29	56.02	56.0	միջին	միջին
3.	«Ալերգիայի, անաֆիլաքսիայի ժամանակ կիրառվող դեղեր»	24	20	58.42	61.8	միջին	միջին
4.	«Հակացնցումային դեղեր»	20	13	62.0	75.9	միջին	բարձր
5.	«Հակավարակային դեղեր»	27	25	54.45	52.5	միջին	միջին
6.	«Հակամիգրենային դեղեր»	16	8	39.13	91.02	ցածր	բարձր
7.	«Հակապարկինսոնային դեղեր»	14	8	55.37	62.0	միջին	միջին
8.	«Արյան վրա ազդող դեղեր»	21	21	52.0	74.3	միջին	բարձր
9.	«Արյան պատրաստուկներ, պլազմայի փոխարինիչներ»	6	3	82.07	100.0	բարձր	բարձր
10.	«Միրտանոթային դեղեր»	30	30	38.64	42.98	ցածր	ցածր
11.	«Մաշկային հիվանդությունների դեպքում կիրառվող դեղեր (տեղային)»	32	23	60.99	63.3	միջին	միջին
12.	«Վարակազերծիչներ և հականեխիչ միջոցներ»	24	17	49.24	66.25	միջին	միջին
13.	«Միզամուղներ»	21	11	54.25	75.1	միջին	բարձր
14.	«Ստամոքսաաղիքային դեղեր»	29	27	44.21	41.0	ցածր	ցածր
15.	«Հորմոններ, այլ ներզատային դեղեր, հակաբեղմնավորիչներ»	24	18	74.38	57.48	բարձր	միջին
16.	«Իմունաբանական դեղեր»	16	14	66.8	58.84	միջին	միջին
17.	«Մկանային ապալարիչներ (ծայրանդամային ազդեցության) խոլինէսթերազի արգելակիչներ»	16	10	70.32	71.49	բարձր	բարձր
18.	«Ակնաբուժական դեղեր»	24	19	52.2	59.2	միջին	միջին
19.	«Արգանդակծկիչներ և արգանդաթուլացնողներ»	11	6	81.0	85.6	բարձր	բարձր
20.	«Հոգեմետ դեղեր»	15	13	63.29	66.1	միջին	միջին
21.	«Շնչառական համակարգի վրա ազդող դեղեր»	26	16	44.85	61.2	ցածր	միջին
22.	«Ջրաաղային, թթվահիմնային հավասարակշռությունը կարգավորող լուծույթներ»	14	10	87.96	94.8	բարձր	բարձր


Աղյուսակ 5-ում ներկայացված է նախկինում ուսումնասիրված դեղերի շրջանառության ոլորտի ապրանքային շուկաների մրցակցային իրավիճակը բնութագրող առանձին ցուցանիշների համեմատական պատկերը: Նախորդ ուսումնասիրության

արդյունքում նշված շուկաներից 5-ը բարձր կենտրոնացված էին (կենտրոնացվածության աստիճանը 70.32-ից 87.96 տոկոս), 13-ը՝ միջին կենտրոնացված (կենտրոնացվածության աստիճանը 47.54-ից 66.8 տոկոս), իսկ 4-ը՝ ցածր կենտրոնացված (կենտրոնացվածության աստիճանը 38.64-ից 44.85 տոկոս): Վեց ապրանքային շուկաներում առկա էր գերիշխող դիրք զբաղեցնող մեկ տնտեսվարող սուբյեկտ:

Այս տարվա ընթացքում իրականացված ուսումնասիրության արդյունքներով 8 ապրանքային շուկաներ բարձր կենտրոնացված են (կենտրոնացվածության աստիճանը կազմում է 71.49-ից 100.0 տոկոս), 12-ը՝ միջին կենտրոնացված (կենտրոնացվածության աստիճանը կազմում է 52.5-ից 66.25 տոկոս) և ընդամենը 2 ապրանքային շուկա՝ ցածր կենտրոնացված (կենտրոնացվածության աստիճանը՝ 41.0-ից 42.98 տոկոս): Ապրանքային շուկաներից 13-ում առկա են գերիշխող դիրք ունեցող տնտեսվարող սուբյեկտներ, այդ թվում 9 ապրանքային շուկաներում՝ մեկ տնտեսվարող սուբյեկտ (այդ թվում, 3 ապրանքային շուկաներում գերիշխող դիրք ունեցող տնտեսվարող սուբյեկտ է համարվել անձանց խումբ), երկու ապրանքային շուկաներում առկա են երկու գերիշխող դիրք ունեցող՝ յուրաքանչյուրն առանձին, իսկ մյուս երկու ապրանքային շուկաներում՝ տնտեսվարող սուբյեկտները համարվել են համատեղ գերիշխող դիրք ունեցող: Ինչ վերաբերում է մասնակիցների թվին, ապա նրանց թվի նվազում է նկատվում: Այսպես, բացառությամբ 2 ապրանքային շուկաների, մնացած ապրանքային շուկաներում մասնակիցների թիվը նվազել է առնվազն 2, իսկ առավելագույնը 10 տնտեսվարող սուբյեկտով: Ընդ որում, եթե նախորդ ուսումնասիրության արդյունքում բոլոր ապրանքային շուկաներում մասնակիցների թիվը կազմում էր 467 տնտեսվարող սուբյեկտ, ապա այս տարվա ընթացքում իրականացված ուսումնասիրության արդյունքներով այն կազմել է 358 տնտեսվարող սուբյեկտ (մասնակիցների թիվը նվազել է 23.3 տոկոսով):


Գծանկար 3

Ղեղերի շրջանառության ոլորտի ապրանքային շուկաների կենտրոնացվածության աստիճանի դինամիկան



Գծանկար 4

Ղեղերի շրջանառության ոլորտի ապրանքային շուկաների մասնակիցների թվի դինամիկան



Ապրանքային շուկաների կենտրոնացվածության աստիճանի տարբեր մակարդակներից կախված Հանձնաժողովը իրականացնում է տարբեր գործառնություններ անցնում գործող տնտեսվարող սուբյեկտների նկատմամբ: Այսպես, ցածր կենտրոնացվածության աստիճան ունեցող ապրանքային շուկաներում ուսումնասիրվում է կենտրոնացվածության աստիճանի դինամիկան, ինչպես նաև առաջատար տնտեսվարող սուբյեկտների դիրքն այդ ապրանքային շուկաներում: Միջին կենտրոնացվածության աստիճան ունեցող ապրանքային շուկաներում ուսումնասիրությունն իրականացվում է տնտեսվարող սուբյեկտների միջև գործարքների կնքման նկատմամբ: Բարձր

կենտրոնացվածության աստիճան ունեցող ապրանքային շուկաներում իրականացվում է դիտանցում գերիշխող դիրք ունեցող տնտեսվարող սուբյեկտների վարքագծի նկատմամբ:

Հանձնաժողովը նախորդ տարիների ընթացքում հայտնաբերել է հակամրցակցային համաձայնությունների 7 դեպք՝ «Հավի ձու՝ կճեպով», «Կարագ», «Բուսական յուղ» ապրանքային շուկաներում, գազալցման, բանկային գործունեության և դեղերի շրջանառության, ինչպես նաև ավիափոխադրումների ոլորտներում: Սակայն, նշված դեպքերը ուսումնասիրելիս, Հանձնաժողովը հանդիպել է տարաբնույթ խնդիրների՝ կապված օրենսդրության անկատարության, տեղեկատվության և ապացույցների հավաքագրման հետ: Հակամրցակցային համաձայնությունների բացահայտումը, թերևս, Օրենքի դրույթների կիրարկման ամենադժվար խնդիրներից է: Հանձնաժողովն իր գործունեության անցած տարիների ընթացքում ուսումնասիրել է բազմաթիվ շուկաներ, հատկապես ապրանքների իրացման գների չհիմնավորված բարձրացումը, պահպանումը և չհիմնավորված գների սահմանումը կամ կիրառումը կանխելու և վերացնելու ուղղությամբ:

Դա պայմանավորված է Օրենքում հակամրցակցային համաձայնությունների մասին դրույթների ոչ միանշանակ սահմանումներով, կնքվող համաձայնությունների գրավոր ամրագրված չլինելու (հիմնականում դրանք կրում են բանավոր բնույթ), ինչպես նաև ստուգումների շրջանակների սահմանափակ լինելու հանգամանքներով: Նշված գործոնները թույլ չեն տալիս Հանձնաժողովին ժամանակին իրականացնել տնտեսվարող սուբյեկտների մրցակցությունը սահմանափակող համաձայնեցված գործողությունների կանխումը: Հանձնաժողովը հակամրցակցային համաձայնությունների բացահայտման և պատասխանատվության միջոցի կիրառման դեպքում համաձայնության յուրաքանչյուր մասնակցի համար չի առանձնացնում և չի ապացուցում խախտումը, այլ որակում է այն որպես ընդհանուր խմբով կատարված խախտում կամ որակում է գործողությունը՝ որպես հակամրցակցային համաձայնության իրավախախտում՝ հիմնված որոշակի ժամանակահատվածում ապրանքի գնի չհիմնավորված փոփոխության գործոնի վրա, ինչը դատական ատյանների կողմից լիարժեք հիմնավորված չի համարվում: Անհրաժեշտ են օրենսդրական բարեփոխումներ, որոնց հիման վրա Հանձնաժողովը կնախաձեռնի հստակ մոտեցումներ, ինչն էլ կնպաստի Հանձնաժողովի գործունեության արդյունավետության բարձրացմանը:

Հակամրցակցային համաձայնությունների բացահայտման ու կանխարգելման խնդրում Հանձնաժողովը կարևորում է նաև գնումների բնագավառում համաձայնեցված գործողություններին առնչվող ռիսկերի նվազեցումը: Գնումների բնագավառում համաձայնեցված գործողությունների ռիսկերը ներառվում են հիմնականում երկու խմբերում՝ խտրականության կիրառմանը և պետական ծառայողների անհարկի խրախուսմանն ուղղված չարաշահումներում: 2011 թվականին Հանձնաժողովը նախատեսում է իր մասնակցության միջոցով գնումների գործընթացում հնարավոր հակամրցակցային համաձայնությունների բացահայտման և կանխարգելման մեխանիզմների ներդրումը:

Արդի պայմաններում բարձր կենտրոնացվածության աստիճան ունեցող ապրանքային շուկաներում գործող և գերիշխող կամ մենաշնորհ դիրք ունեցող տնտեսվարող սուբյեկտների գործունեության վերահսկումը կրում է ոչ միայն սոցիալական, այլ նաև տնտեսական նշանակություն: Նման հսկողության միջոցով Հանձնաժողովը նպատակ ունի տնտեսվարող սուբյեկտների գործունեությունն ուղղորդել շուկայական տնտեսության կանոնների պահպանմանը: Հանձնաժողովը շարունակելու է իրականացնել մրցակցության օրենսդրության տեսանկյունից մենաշնորհ կամ օլիգոպոլ տիպի ապրանքային շուկաներում գնագոյացման վերահսկողություն՝ այդպիսով պետության համար հնարավորություն ստեղծելով կանխել գերիշխող (մենաշնորհ) դիրք ունեցող տնտեսվարող սուբյեկտների չարաշահումները:

Հանձնաժողովն իր գործունեության անցած տարիների ընթացքում հարուցել է մի շարք վարչական վարույթներ և ընդունել գերիշխող դիրքի չարաշահմանն առնչվող 10 որոշում: Վերջին տարիներին Հանձնաժողովն իրականացրել է նաև պարենային և ոչ պարենային ապրանքների մանրածախ գների ամենօրյա շարունակական դիտանցում և դրանց արդյունքների վերլուծություն: Գների դիտանցումը հանդիսանում է Հանձնաժողովի կողմից ապրանքային շուկաներում գնագոյացմանը հետևելու լծակ: Սակայն, օրենսդրական խնդիրների առկայությունը նկատելիորեն սահմանափակում և խոչընդոտում է դիտանցման արդյունքների արդյունավետ և օպերատիվ կիրառմանը:

Մինևույն ժամանակ գերիշխող դիրքի չարաշահման հայտնաբերման ուղղությամբ Հանձնաժողովի կողմից կատարված մի շարք ուսումնասիրություններ ստացել են հասարակական մեծ հնչեղություն: Սակայն, կատարված ուսումնասիրությունները և

դիտանցումները ցույց են տվել, որ մրցակցության իրավիճակը մի շարք ապրանքային շուկաներում դեռևս չի հասնում բնականոն մակարդակի: Այդ իսկ պատճառով կայուն տնտեսական և իրավական միջավայրի ամրապնդման, տնտեսական անվտանգության սպառնալիքների և ռիսկերի նվազեցման համար Հանձնաժողովը նախատեսում է ձեռնարկել ակտիվ միջոցառումներ՝ թուլացնելու և վերացնելու ապրանքային շուկաներում բարձր կենտրոնացվածության առկայության հնարավոր բացասական ազդեցությունները և օրենսդրական փոփոխություններին զուգահեռ շարունակել իրականացնել ուսումնասիրություններ, որոնք կվերաբերեն մրցակցությանը խոչընդոտող գործողություններին կամ վարքագծին, մշակել և ներդնել գործարար հանրության և սպառողների շրջանում հարցումներ անցկացնելու մեխանիզմը, իրականացնել աշխատանքներ ուսումնասիրվող շուկաների ընտրման գործընթացի բարելավման, դիմում բողոքների ավելացման և տեղեկատվության հավաքագրման համար, վերանայել և Օրենքով հստակ ամրագրել գների դիտանցմանն առնչվող դրույթը՝ հստակ սահմանելով դիտանցման իրականացման ընթացքում տնտեսվարող սուբյեկտի և Հանձնաժողովի աշխատակիցների գործառույթները:

Հանձնաժողովի կողմից համակենտրոնացումների նկատմամբ վերահսկողություն իրականացնելու համար, տնտեսվարող սուբյեկտները պարտավոր են օրենքով սահմանված կարգով ներկայացնել միացման և բաժնեմասի ձեռքբերման վերաբերյալ համակենտրոնացման հայտարարագրեր: Սակայն, Հանձնաժողովը որոշ իրավական, ֆինանսական և տեխնիկական խոչընդոտների է հանդիպում համակենտրոնացումների հետ կապված ուսումնասիրությունների և չհայտարարագրված համակենտրոնացումների բացահայտման ընթացքում: Ուսումնասիրություններ իրականացնելու նպատակով Հանձնաժողովն անհրաժեշտ տեղեկատվությունը ձեռք է բերվում պետական մարմիններից և ներդրումային կազմակերպություններից, մասնավորապես, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության պետական ռեգիստրի գործակալությունից, Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիայից, «Կապիտալ Ասեթս Մենեջմենթ» և «Արմենբրոկ» ընկերություններից, ինչպես նաև՝ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեից: Պետք է նշել, որ բաժնետիրական ընկերությունների ռեեստրը վարում են վերը նշված բաժնետիրական ընկերությունները, իսկ սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների և այլ կազմակերպչաիրավական ձև ունեցող տնտեսվարող սուբյեկտների մասնակիցների

վերաբերյալ փոփոխությունները գրանցվում են Հայստանի Հանրապետության արդարադատության նախարարության պետական ռեգիստրի գործակալության տեղեկատվական բազայում: ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեից ստացվող տվյալները վերաբերում են տնտեսվարող սուբյեկտների ընդհանուր իրացման շրջանառությանը և ակտիվներին:

Հիմնականում, նշված մարմինները պահպանում են տարբեր ձևաչափերով բազաներ, որի արդյունքում Հանձնաժողովը չի կարողանում ստանալ համադրելի տեղեկատվություն կամ բացահայտել միմյանց հետ որոշակի կապ ունեցող գործարքները: Իսկ իրավական խոչընդոտների առումով, խնդիրներն առնչվում են ծառայողական տեղեկատվության հրապարակմանը, երբ արգելվում է այն երրորդ անձանց հայտնի դարձնելը: Վերը նշվածը վերաբերում է հիմնականում ներդրումային ընկերությունների կողմից «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով (այսուհետ՝ «Արժեթղթերի շուկայի մասին» օրենք) սահմանված կարգով, ռեեստրի վարման իրականացման ընթացքում ստացվող տեղեկություններին, քանի որ վերջիններս են տիրապետում բաժնետիրական ընկերությունների կանոնադրական կապիտալում արժեթղթերի ձեռքբերումների վերաբերյալ տվյալներին, որոնց բացակայության պարագայում, գործնականում, անհնար է Հանձնաժողովի կողմից համակենտրոնացումների նկատմամբ վերահսկողության իրականացումը: «Արժեթղթերի շուկայի մասին» օրենքով, ծառայողական տեղեկությունները կարող են տրամադրվել նույն օրենքով սահմանված դեպքերում և հիմքերով, սակայն, Հանձնաժողովը, որպես նման տեղեկություն ստացող պետական մարմին, նշված չէ: Նշված խոչընդոտները հաղթահարելու համար, տեխնոլոգիական առաջընթացն ապահովելու, հակաիրավական գործարքների բացահայտելու և կանխելու համար անհրաժեշտ է ապահովել այդ ուղղությամբ իրականացվող պետական քաղաքականության արդյունավետության բարձրացում և ձևավորել համապատասխան մարմինների համար միասնական տեղեկատվական բազա ստեղծելու մոտեցումը՝ հստակ սահմանված նպատակներով և դրանցից բխող միջոցառումների ծրագրով:

Հարցի կարգավորման համար Հանձնաժողովը ներկայումս նախաձեռնել է համապատասխան օրենսդրական փոփոխություններ: Որպես կանոն, համակենտրոնացման գծով վարչական վարույթները Հանձնաժողովի կողմից

իրականացվել են տնտեսվարող սուբյեկտների դիմումների համաձայն: Պետք է նշել, որ համակենտրոնացումների գծով իրականացվող վարչական վարույթները պահանջում են ծավալուն և ժամանակատար աշխատանք՝ կապված ապրանքային շուկայի ուսումնասիրության և ներկայացված տեղեկատվության մշակման, ինչպես նաև որոշ դեպքերում (ֆինանսական, ապահովագրական ծառայություններ և այլ ոլորտներ) անհրաժեշտություն է առաջանում ստանալ տվյալ ոլորտը համակարգող մարմնի մասնագիտական դիրքորոշումը և բաժնետերերի հետ կապված լրացուցիչ տեղեկատվություն: Հանձնաժողովի կողմից 2010 թվականի հունվար ամսից մինչև սեպտեմբեր ամիսը համակենտրոնացումների գծով իրականացվել են մի շարք վարչական վարույթներ, բացի այդ տրվել են նաև իրավաբանական պարզաբանումներ:

Տնտեսական համակենտրոնացման պետական կարգավորումը հանդիսանում է տնտեսության մենաշնորհացման կանխման կարևոր գործիքներից՝ ուղղված տնտեսության կայունության ապահովմանը, ինչպես նաև՝ ազգային անվտանգությանը:

Տնտեսական համակենտրոնացման վերահսկման գործառույթը հանդիսանում է մրցակցային քաղաքականության կարևոր ուղղությունը: Համակենտրոնացման պետական վերահսկողությունը նախատեսված է մրցակցային միջավայրի վատթարացման արգելմանը և գերիշխող դիրքի չարաշահման հետ կապված իրավիճակների ստեղծման բացառմանը: Այդ պատճառով էլ միացումների և կլանումների առավել խոշոր գործարքներն իրականացվում են Հանձնաժողովից թույլտվություն ստանալու դեպքում:

Ներկայումս համաշխարհային շուկայի արտադրության մի շարք ճյուղերում առկա է համակենտրոնացման միտում, որը նաև նպաստում է հայկական ընկերությունների միացմանն ու խոշորացմանը: Սակայն շուկայում առկա բարձր կենտրոնացվածությունն ինքնին չի վկայում այդ շուկայում մրցակցության բացակայության մասին, այլ շատ հաճախ՝ որոշ ճյուղերում բարձր կենտրոնացվածության փաստն անհրաժեշտ պայման է հանդիսանում արդյունավետ տնտեսական գործունեության համար:

Հանձնաժողովը շարունակում է աշխատանքներ իրականացրել անբարեխիղճ մրցակցության դրսևորումների հայտնաբերման, դրանց դադարեցման և հետագայում բացառման ուղղությամբ:

Չնայած այն հանգամանքին, որ Հանձնաժողովի կողմից ընդունված իրավախախտմանն առնչվող որոշումներն ամրագրում են նման գործողությունները կամ վարքագիծը հետագայում բացառող դրույթ, սակայն, ձեռնարկված միջոցներն օրենսդրության անկատարության պատճառով բավականաչափ կանխարգելող արդյունք չեն տալիս և նկատվում է միևնույն տնտեսվարող սուբյեկտի կողմից միևնույն ապրանքի գծով անբարեխիղճ մրցակցության դրսևորումների բազմակիությունը: Այսպիսով, տնտեսվարող սուբյեկտները հաճախ են փոխում անբարեխիղճ մրցակցությանն առնչվող իրավախախտման դրսևորումը, բայց չեն դադարեցնում անօրինական գործունեությունը: Որոշ խնդիրներ են ծագում նաև չգրանցված ապրանքային նշանի նմանակման և իրացվող ապրանքի մակնշման, գրանցված նշանների կամ այլ նմանօրինակ ձևերի նկատմամբ իրավունքի, ներառյալ մտավոր սեփականության իրավունքի օգտագործմամբ պայմանավորված իրավախախտումների հարցում:

Անբարեխիղճ մրցակցության շուրջ ծագած հարաբերությունների կարգավորման հետ կապված օրենսդրական հիմնախնդիրներից են դատական ատյանների հետ առկա տարաձայնությունները: Դատարանը, քննելով որոշակի ապրանքների նկատմամբ շփոթություն առաջացնելու վերաբերյալ Հանձնաժողովի կողմից կայացրած որոշման դեմ բերված հայցերը, ամրագրել է, որ Հանձնաժողովն իրավասու չէ շփոթություն որակել, այլ պետք է առկա լինի առանձին փորձագիտական եզրակացություն: Այս առումով խնդիրներ են առաջանում Հանձնաժողովի՝ լիազոր մարմնի, դերի ամրապնդման և գործարար հանրության ու սպառողների շրջանում մրցակցությանն առնչվող հարցերի ընկալման առումով:

Անբարեխիղճ մրցակցության իրավախախտումների կանխարգելման ուղղությամբ իրականացվող միջոցառումներն ուղղված կլինեն միջազգային նորմերին համապատասխան օրենսդրական դաշտի ձևավորմանը, ինչպես նաև միջազգային նորմերին համապատասխան տուգանքների սահմանմանը և կիրառմանը, շահագրգիռ մարմինների, շահույթ չհետապնդող կազմակերպությունների հետ համագործակցության ընդլայնմանը և համատեղ ծրագրերի իրականացմանը:

Պետական օժանդակությունը համեմատաբար նոր ինստիտուտ է տնտեսական մրցակցության պաշտպանության ոլորտում (պետական օժանդակությունը վերաբերող դրույթն Օրենքում լրացվել է 2007 թվականի փետրվարի 22-ին և ամրագրված է Գլուխ 5¹-

ում): Ներկա պայմաններում Հանձնաժողովն արգելված պետական օժանդակությունները փորձում է բացահայտել առավելապես իր նախաձեռնությամբ և մեկնաբանմամբ՝ ուսումնասիրելով միայն մի շարք պետական և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ընդունվող իրավական ակտերի նախագծերը:

Նշված խնդրի լուծման համար անհրաժեշտ է դիտանցման համապատասխան համակարգի և հստակ մեխանիզմների սահմանում՝ տրամադրվող օժանդակության առումով պարտադիր եզրակացություն ստանալու համար, որոշակի ոլորտներում պետական օժանդակության կիրարկման կանոնների շրջանակի սահմանում, պետական օժանդակության տեսակների դասակարգմանը, օժանդակություն տրամադրող կառույցների ցանկի հաստատում:

Այս առումով, վերը նշված խնդիրների լուծման նպատակով նախապատվությունը տրվում է օրենսդրական փոփոխությունների նախագծման աշխատանքներին և դրա ընդունման գործընթացի աջակցմանը: Օրենսդրական փոփոխություններն ուղղված կլինեն Հանձնաժողովի գործառույթների և իրավասությունների ընդլայնմանը, Օրենքի կիրարկման գործուն մեխանիզմների ստեղծմանը և կնպաստեն Հանձնաժողովի գործունեության արդյունավետության բարձրացմանն ու ազատ մրցակցության համար անհրաժեշտ միջավայրի ձևավորմանը: Առաջարկվող օրենսդրական փոփոխությունները հետապնդում են հետևյալ նպատակները.

1) Օրենքի խախտումների համար պատասխանատվության միջոցների հստակեցումը և խստացումը՝ համապատասխանեցնելով դրանք իրավախախտումների ծանրության աստիճանին և հաշվի առնելով միջազգային առաջավոր փորձը, Օրենքում սահմանվող տուգանքի չափերը չեն համապատասխանում իրավախախտումների բնույթին և ծանրությանը, ինչի պատճառով պատասխանատվության միջոցները չեն ծառայում իրենց նպատակին: Գործող Օրենքի՝ պատասխանատվություն սահմանող դրույթները չեն համապատասխանում նաև այլ երկրների մրցակցային մարմինների կողմից կիրառվող պատասխանատվության միջոցներին: Արդյունքում, իրավախախտ տնտեսվարող սուբյեկտները, Օրենքի խախտելու համար Հանձնաժողովի կողմից ենթարկվելով պատասխանատվության, հետագայում ևս շարունակում են դրսևորել իրավախախտ վարքագիծ՝ առավել նպատակահարմար

համարելով ենթարկվել տուգանքի, քան դադարեցնել Օրենքի խախտումները՝ հաշվի առնելով գործող օրենքով նախատեսված տուգանքի փոքր չափերը:

2) Հանձնաժողովի կողմից վերահսկողական լիազորությունների ընդլայնումը, Օրենքում և համապատասխան իրավական ակտերում բացակայում են Հանձնաժողովի կողմից Օրենքի խախտումների բացահայտման համար անհրաժեշտ լիարժեք մեխանիզմները: Մասնավորապես, ներկա պայմաններում Հանձնաժողովն օրենքով սահմանված բավարար լիազորություններ չունի, որպեսզի անհրաժեշտության դեպքում ստուգի տնտեսվարող սուբյեկտների ներկայացրած տեղեկատվության հավաստիությունը, ինչն էլ հաշվի առնելով՝ տնտեսվարող սուբյեկտները կարող են Հանձնաժողով ներկայացնել իրականությանը չհամապատասխանող տեղեկություններ: Դրա հետ մեկտեղ, Օրենքի համաձայն՝ ստուգումն իրականացվում է միայն վարչական վարույթի շրջանակներում, ինչի պարագայում տնտեսվարող սուբյեկտները, նախապես տեղյակ լինելով Հանձնաժողովի կողմից հնարավոր իրականացվելիք ստուգման վերաբերյալ, հնարավորություն և անհրաժեշտ ժամանակ են ունենում ստուգմանը «նախապատրաստվելու» համար:

3) Օրենքի խախտումների վերաբերյալ ապացույցների ձեռքբերման և ամրապնդման մեխանիզմների ընդարձակումը,

Հանձնաժողովը չունի անհրաժեշտ լիազորություններ Օրենքի խախտումները հայտնաբերելիս յուրաքննաչուր դեպքում անհրաժեշտ ապացույցներ ձեռք բերելու, այդ թվում՝ դիտանցումների արդյունքները փաստաթղթավորելու և դրանք որպես ապացույց օգտագործելու առումով:

4) հակամրցակցային գործունեության կանխարգելման, սահմանափակման և նախազգուշացման առումով, ինչպես նաև մենաշնորհ կամ գերիշխող դիրքի չարաշահման կանխման նպատակով՝ Օրենքի համապատասխան նորմերում իրավախախտման տարրերի հստակեցումը,

Օրենքում բացակայում են տնտեսական մրցակցության արդյունավետ պաշտպանության համար անհրաժեշտ մի շարք նորմեր: Մասնավորապես, գերիշխող դիրք ունեցող տնտեսվարող սուբյեկտները, երբեմն օգտվելով այն հանգամանքից, որ Հանձնաժողովն իրավասություն չունի ազդելու տնտեսվարող սուբյեկտների լուծարման գործընթացի վրա, գերիշխող դիրք ունեցող տնտեսվարող սուբյեկտների կենտրոնացված

գրամամատյանում (ռեեստրում) գրանցվելուց հետո, թույլ տալով գերիշխող դիրքի խախտում, լուծարվում են, ինչի հետևանքով Հանձնաժողովը զրկվում է այս կամ այն ապրաքային շուկայում նրանց վարքագիծը գնահատելու և, անհրաժեշտության դեպքում, պատասխանատվության ենթարկելու հնարավորությունից:

Բացի այդ, Օրենքի իմաստով տնտեսվարող սուբյեկտը ճանաչվում է գերիշխող դիրք ունեցող՝ ելնելով իրացման ծավալներից: Մինչդեռ միջազգային պրակտիկայում վերջինս ճանաչվում է ոչ միայն քանակական չափանիշներով, այլև հատկորոշվում է շուկայական իշխանությամբ: Այս առումով նոր մոտեցումների որդեգրման անհրաժեշտություն է զգացվում, քանի որ միայն քանակական չափանիշներով առաջնորդվելը չի բացահայտում շուկայում իրականում գերիշխող սուբյեկտներին: Համաձայն Միջազգային մրցակցության ցանց կազմակերպության 2007 թվականի ուսումնասիրության արդյունքների, աշխարհի զգալի թվով մրցակցային մարմիններ որդեգրել են շուկայում գերիշխող դիրքի՝ ոչ միայն քանակական, այլ նաև որակական (շուկայական իշխանության) ցուցանիշներով որոշման մոտեցումը:

5) համակենտրոնացումների բացահայտման նպատակով անհրաժեշտ տեղեկությունների ստացման մեխանիզմների ընդլայնումը և համակենտրոնացման հայտարարագրման նոր պահանջների սահմանումը,

Օրենքով սահմանված համակենտրոնացումների վերաբերյալ տեղեկատվություն ստանալու առումով առկա են լուրջ խնդիրներ (օրինակ՝ Հանձնաժողովը ներկայումս ընդհանրապես տեղեկատվություն չի ստանում բաժնետիրական ընկերություններում բաժնետոմսերի առքուվաճառքի, այդ ընկերությունների վերակազմակերպումների վերաբերյալ), քանի որ Օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված չեն համապատասխան մեխանիզմներ՝ Հանձնաժողովի կողմից տեղեկատվության ստացման առումով: Բացի այդ, Օրենքում ամրագրված համակենտրոնացման հայտարարագրման շեմերի կիրառման դեպքում չի ապահովվում ապրանքային շուկաներում կենտրոնացվածությունը կանխելու Հանձնաժողովի գործառույթը:

6) Հանձնաժողովի գործունեության արդյունավետության բարձրացման և որակյալ կադրերի ներգրավման նպատակով ֆինանսավորման նոր մեխանիզմների ներդրումը, Հանձնաժողովի ֆինանսական ռեսուրսների սղությունը: Ներկայումս պետական բյուջեով Հանձնաժողովի գործունեության համար նախատեսված ֆինանսավորումը բավարար չէ

Օրենքով Հանձնաժողովի առջև դրված խնդիրների պատշաճ և արդյունավետ իրագործման, որակյալ կադրերի ներգրավման և ոլորտում մասնագիտացված կադրերի հասունության կանխման համար: Իրականացված ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ գրեթե բոլոր երկրներում տնտեսական մրցակցության պաշտպանության պետական մարմինների ֆինանսավորումը, մեկ աշխատողի հաշվով, տարեկան կտրվածքով, բազմակի գերազանցում է Հանձնաժողովի տարեկան բյուջեն (օրինակ՝ Հունաստանինը՝ 36,6 անգամ, Պորտուգալիայինը՝ 14,6 անգամ, Ֆրանսիայինը՝ 12,8 անգամ, Հունգարիայինը՝ 7,8 անգամ և այլն): Բացի այդ Հայաստանի Հանրապետությունում համադրելի լիազորություններով օժտված պետական այլ մարմին՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունների կարգավորման հանձնաժողովի տարեկան բյուջեն ևս զգալիորեն (կրկնակի անգամ) գերազանցում է Հանձնաժողովի տարեկան բյուջեն: Հարկ է նշել, որ Հանձնաժողովի բավարար ֆինանսավորման անհրաժեշտության մասին բազմիցս նշվել է նաև ոլորտի խնդիրներով զբաղվող գրեթե բոլոր միջազգային փորձագետների կողմից ներկայացված զեկույցներում:

7) Հանձնաժողովի կանխարգելիչ լիազորությունների սահմանումը և Հանձնաժողովի գործունեության օպերատիվությունն ապահովող համապատասխան ընթացակարգերի նախատեսումը,

Հանձնաժողովի կանխարգելիչ լիազորությունների և Հանձնաժողովի գործունեության օպերատիվությունն ապահովող համապատասխան ընթացակարգերի բացակայությունը: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Օրենքի խախտումները բացառելու համար առավել արդյունավետ է օպերատիվ կերպով Օրենքի խախտումների կանխարգելումը, քան դրանց բացահայտումն ու հետևանքների վերացումը, ուստի այս առումով Հանձնաժողովի կանխարգելիչ լիազորությունների բացակայությունը լուրջ խոչընդոտ է հանդիսանում տնտեսական մրցակցությունը խաթարող երևույթների դեմ արդյունավետ պայքար ծավալելու առումով: Բացի այդ, ներկայումս Հանձնաժողովի կողմից կիրառվող ընթացակարգերը թույլ չեն տալիս ավելի օպերատիվ արձագանքել Օրենքի խախտումներին, ինչպես նաև՝ ապրանքային շուկաներում կատարվող փոփոխություններին:

8) Օրենքի նորմերի հստակեցումը՝ հաշվի առնելով իրավակիրառ փորձը, Հանձնաժողովի որոշումների դեմ բերված վարչական բողոքներում և դատական

հայցերում, ինչպես նաև դրանց քննարկման արդյունքում կայացված ակտերում Օրենքի դրույթների վերաբերյալ ներկայացված դիրքորոշումները, եզրահանգումները,

Օրենքը պարունակում է մի շարք անհստակություններ, որոնք գործնականում խոչընդոտներ են առաջացնում Հանձնաժողովի և տնտեսվարող սուբյեկտների մոտ: Մասնավորապես, Օրենքում անհստակություններ են պարունակվում՝ կապված տնտեսվարող սուբյեկտների կողմից Հանձնաժողովի որոշմամբ սահմանված ժամկետում տեղեկատվություն չներկայացնելու վերաբերյալ նորմերում, ինչի հետևանքով տնտեսվարող սուբյեկտները երբեմն տեղեկատվությունը Հանձնաժողով են ներկայացնում այն ժամանակ (որոշ դեպքերում՝ ամիսներ անց), երբ դրա անհրաժեշտությունն այլևս չկա: Օրենքում անհստակություններ են պարունակվում նաև գերիշխող դիրքին, հակամրցակցային համաձայնություններին, համակենտրոնացումներին, անբարեխիղճ մրցակցության դեպքերին վերաբերող նորմերում, որոնք հաճախ գործնականում տարաբնույթ ընկալումների տեղիք են տալիս:

9) այլ օրենքների հետ համապատասխանության ապահովումը,

Առկա են Օրենքի և այլ իրավական ակտերի միջև անհամապատասխանություններ: Մասնավորապես, Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 195-րդ հոդվածը, որը քրեական պատասխանատվություն է նախատեսում հակամրցակցային գործունեության համար, չի համապատասխանում Օրենքում կիրառվող հասկացություններին:

Առկա խնդիրներն առաջարկվում է լուծել նաև Օրենքի և հարակից օրենքների մեջ համապատասխան փոփոխություններ և լրացումներ կատարելու միջոցով:

II. Տնտեսական մրցակցության պաշտպանության միջոցառումները և դրանց իրականացման ժամանակացույցը

Ծրագիրն իրենից ներկայացնում է Հանձնաժողովի կողմից իրականացվող հաջորդական միջոցառումների համակարգ, որոնք ուղղված են մրցակցության պայմանների ապահովմանը և օպերատիվ ձևով անդրադառնում են երկրում տնտեսական իրավիճակի փոփոխություններին: Հանձնաժողովը, հիմք ընդունելով սույն Ծրագրի առաջին գլխում ներկայացված տնտեսական մրցակցության իրավիճակի վերլուծությունը և բացահայտված հիմնախնդիրները, ինչպես նաև՝ հաշվի առնելով նախորդ տարիներին տնտեսական մրցակցության պաշտպանության ոլորտում կուտակված փորձը, սահմանում է այն միջոցառումների ցանկը, որոնք ուղղված են մրցակցության պայմանների ապահովմանը, բարելավմանը և երկրի տնտեսական բնագավառի բարեփոխումների արդյունավետ ձևով խթանմանը: Վերոնշյալ միջոցառումները Հանձնաժողովը 2011 թվականին ծրագրում է իրականացնել տնտեսական մրցակցության քաղաքականության հետևյալ գերակա ուղղություններով.

- սոցիալական նշանակություն ունեցող ապրանքային շուկաներում համաձայնեցված հակամրցակցային գործողությունների, գերիշխող (մենաշնորհ) դիրքի չարաշահման բնույթի խախտումների բացահայտմանը և դադարեցմանն ուղղված գործողությունների ուժեղացում,
- գերիշխող դիրք ունեցող տնտեսվարող սուբյեկտների համաձայնեցված հակամրցակցային գործողությունների, անբարեխիղճ մրցակցության դրսևորումների բացահայտում և դադարեցում,
- ՀՀ կառավարության, նախարարությունների, գերատեսչությունների և այլ շահագրգիռ մարմինների հետ մրցակցային արդյունավետ քաղաքականության ոլորտում համատեղ գործողությունների իրականացում,
- մրցակցության փաստարկման և քարոզչությանն ուղղված աշխատանքների ուժեղացում, տնտեսական մրցակցության օրենսդրական հարցերում հասարակության տեղեկացվածության ապահովման աջակցություն,
- Հանձնաժողովի կողմից պետական աջակցության տրամադրման նկատմամբ վերահսկողության իրականացում՝ ապրանքային շուկայում մրցակցության

սահմանափակման, կանխման կամ արգելման բնույթի խախտումների բացառման համար:

Նշված ուղղություններով գործողությունները Հանձնաժողովը ծրագրում է իրականացնել հետևյալ միջոցառումների միջոցով.

Տնտեսական մրցակցության պաշտպանության միջոցառումները և դրանց իրականացման ժամանակացույցը

Աղյուսակ 6

ՀՀ	Միջոցառում	Ժամկետ
1.	Հանձնաժողովի արդյունավետ գործունեությանն համահունչ ժամանակակից տեղեկատվական բազայի հայեցակարգի մշակում	
	ապրանքային շուկաների տնտեսական մրցակցության իրավիճակի գնահատման համար ժամանակակից մեթոդների կիրառում (շուկայական իշխանության գնահատում, SSNIP-թեստի հնարավոր ներդրում, էկոնոմետրիայի կիրառում և այլն)	տարվա ընթացքում
	տնտեսական մրցակցության իրավիճակի վերլուծություն՝ բնակչության կողմից սպառման կառուցվածքում առավել մեծ տեսակարար կշիռ ունեցող ապրանքների ապրանքային շուկաներում,	յուրաքանչյուր եռամսյակ
	նախկինում չուսումնասիրված ապրանքային շուկաների կառուցվածքի ուսումնասիրություն	տարվա ընթացքում
	նախկինում ուսումնասիրված ապրանքային շուկաներում տնտեսական մրցակցության իրավիճակի շարունակական դիտանցում և գնահատում:	տարվա ընթացքում
2.	Հակամրցակցային համաձայնությունների հայտնաբերման նպատակով ուսումնասիրություն, գնահատում, օրենքի խախտման դեպքում՝ պատասխանատվության միջոցի կիրառում և դադարեցում	
	իրացման կամ ձեռքբերման խտրական գների հայտնաբերմանն ուղղված դիտանցում և գնահատում	դիմումների հիման վրա, ինչպես նաև Հանձնաժողովի նախաձեռնությամբ
	ապրանքի գնի չհիմնավորված բարձրացման, իջեցման կամ պահպանման բացահայտմանն ուղղված դիտանցում և գնահատում	
	միևնույն ապրանքային շուկայի որոշակի տարածքներում, որոշակի ծավալներով, տեսականիով, սպառողների կամ մատակարարների խմբերով ապրանքների շրջանառության սահմանափակման դեպքերի ուսումնասիրություն	

	համաձայնեցված գործողությունների արդյունքում տնտեսվարող սուբյեկտների կողմից շուկայի մուտքի խոչընդոտների կամ շուկայից տնտեսվարող սուբյեկտներին դուրս մղելու փաստերի և այլ գործողությունների բացահայտմանն ուղղված ուսումնասիրություն	շրջանակներում (ոչ ավելի քան 90 օր)
3.	Ապրանքային շուկաներում գերիշխող դիրք ունեցող տնտեսվարող սուբյեկտների վարքագծի ուսումնասիրում և հնարավոր չարաշահումների հայտնաբերում	
	իրացման կամ ձեռքբերման չհիմնավորված, խտրական գների սահմանման, կիրառման, կամ օրենսդրությանը հակասող առևտրի այլ պայմանների ուղղակի կամ անուղղակի պարտադրման դեպքերի հայտնաբերում	դիմումների հիման վրա, ինչպես նաև Հանձնաժողովի նախաձեռնությամբ հարուցված վարչական վարույթների շրջանակներում (ոչ ավելի քան 90 օր)
	առանձին գործընկերների նկատմամբ խտրական պայմանների, լրացուցիչ պարտավորությունների պարտադրման դեպքերի հայտնաբերում	
	գերիշխող դիրք ունեցող տնտեսվարող սուբյեկտների կողմից այլ գործողությունների բացահայտում, որոնք հանգեցնում են այլ տնտեսվարող սուբյեկտի շուկա մուտք գործելու խոչընդոտների (շուկա մուտք գործելը սահմանափակելու) կամ շուկայից նրան դուրս մղելուն:	
4.	Համակենտրոնացումների նկատմամբ վերահսկողություն	
	տնտեսվարող սուբյեկտների միացումների կամ միաձուլումների, մեկ տնտեսվարող սուբյեկտի կողմից այլ տնտեսվարող սուբյեկտի ակտիվների կամ փայաբաժնի ձեռքբերման, ինչպես նաև մեկ այլ տնտեսվարող սուբյեկտի որոշումների կայացման կամ մրցունակության վրա ազդելու վերաբերյալ տեղեկատվության ձեռքբերում	դիմումների հիման վրա, ինչպես նաև Հանձնաժողովի նախաձեռնությամբ հարուցված վարչական վարույթների շրջանակներում (ոչ ավելի քան 90 օր)
	համակենտրոնացումների նկատմամբ վերահսկողության արդյունավետ մեթոդների կատարելագործում	
5.	Անբարեխիղճ մրցակցության դրսևորումների բացահայտում և դադարեցում	
	անբարեխիղճ մրցակցության դրսևորումների հայտնաբերման նպատակով գովազդի ոլորտում մշտական դիտանցում	դիմումների հիման վրա, ինչպես նաև Հանձնաժողովի նախաձեռնությամբ հարուցված վարչական վարույթների շրջանակներում (ոչ ավելի քան 90 օր)
	քաղաքացիների և տնտեսվարող սուբյեկտների դիմումների, ՋԼՄ – երի հրապարակումների հիման վրա ուսումնասիրությունների իրականացում	
	անբարեխիղճ մրցակցության դրսևորումների հայտնաբերման ուղղությամբ աշխատանքների իրականացում	

6.	Տնտեսական մրցակցության սահմանափակման, կանխման կամ Օրենքին հակասող պետական օժանդակության հայտնաբերումը	տարվա ընթացքում, Հանձնաժողովի նախաձեռնությամբ
7.	Հանձնաժողովի կողմից ընդունված որոշումների կատարման նկատմամբ վերահսկողության իրականացում	
	Հանձնաժողովի որոշման կատարման նկատմամբ վերահսկողության նպատակով օրենքով սահմանված կարգով իրականացնելու հետազոտություն, ստուգում, ուսումնասիրություն և (կամ) դիտանցում	տարվա ընթացքում
8.	Ազատ տնտեսական մրցակցությունը սահմանափակող վարչական խոչընդոտների հայտնաբերում և դադարեցում	
	պետական կառավարման մարմինների որոշումների նախագծերի ուսումնասիրություն, անհրաժեշտության դեպքում՝ համապատասխան եզրակացությունների տրամադրում տարվա ընթացքում դիմումների հիման վրա, ինչպես նաև Հանձնաժողովի նախաձեռնությամբ հարուցված վարչական վարույթների շրջանակներում (ոչ ավելի քան 90 օր)	դիմումների հիման վրա, ինչպես նաև Հանձնաժողովի նախաձեռնությամբ հարուցված վարչական վարույթների շրջանակներում (ոչ ավելի քան 90 օր)
	տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ընդունված տնտեսական մրցակցության խնդիրներին առնչվող ակտերի ուսումնասիրություն, անհրաժեշտության դեպքում՝ համապատասխան եզրակացությունների տրամադրում	
	պետական մարմինների կամ դրանց պաշտոնատար անձանց կողմից Օրենքին հակասող գործողությունների, մասնավորապես պետական գնումների ոլորտի վերաբերյալ որոշումների ընդունում	
	Օրենքի խախտման համար պետական և տեղական ինքնակառավարման մարմինների պաշտոնատար անձանց նկատմամբ պատասխանատվության միջոցների կիրառում	
	Օրենքով սահմանված կարգով հետազոտության, ստուգման, ուսումնասիրության և (կամ) դիտանցման իրականացում	
9.	Տնտեսվարող սուբյեկտի կողմից ներկայացված տեղեկատվության հավաստիության պարզում,	
	Օրենքով սահմանված կարգով հետազոտության, ստուգման, ուսումնասիրության և (կամ) դիտանցման իրականացում	ըստ անհրաժեշտության, Հանձնաժողովի նախաձեռնությամբ
	դիտանցման նոր մեխանիզմների ընդունում և կիրառում	տարվա ընթացքում
10.	ԶԼՄ-երի հրապարակումներին, տնտեսվարող սուբյեկտների դիմումներին օպերատիվ արձագանքում, «Թեժ գծի» միջոցով ստացված բողոքներին արձագանքում	տարվա ընթացքում
11.	Հասարակության տեղեկացվածության բարձրացում	
	զանգվածային լրատվության միջոցներով Հանձնաժողովի աշխատանքների պարբերական լուսաբանում	տարվա ընթացքում

	պետական մարմիններին, տնտեսվարող սուբյեկտներին և հասարակությանը տնտեսական մրցակցության սկզբունքների պահպանման վերաբերյալ իրազեկում և ներկայացում	
	զանգվածային լրատվության միջոցներով Օրենքի դրույթների մեկնաբանությունների ներկայացում	
	ինտերնետային ցանցում on-line ռեժիմով Հանձնաժողով ներկայացված դիմումներին և բողոքներին արձագանքում	
12.	Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին օրենսդրության լրամշակում, միջազգային համագործակցություն	
	Օրենսդրական դաշտի բարելավում, ինչպես նաև դրա վերաբերյալ համապատասխան առաջարկությունների ներկայացում՝ իրավասու մարմիններին մինչև 2011 թվականի 1-ին կիսամյակի ավարտը	տարվա ընթացքում
	Հակամրցակցային համաձայնությունների հայտնաբերման ուղղված ուղեցույցի մշակում, այդ թվում պատժամիջոցների մեղմման ծրագրի իրագործման ընթացակարգի մշակում	
	Օրենքի դրույթների կիրարկումն ապահովող համապատասխան նորմատիվային բազայի կատարելագործում	
	Եվրոպական և ԱՊՀ անդամ պետությունների մրցակցային օրենսդրության հետ ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության օրենսդրության ներդաշնակեցման գործողությունների իրականացում, համապատասխան համաձայնագրերի կնքում	

III. Տնտեսական մրցակցության կարգավորման մեխանիզմները

Տնտեսական մրցակցության պաշտպանության միջոցառումների իրականացումն ապահովելու նպատակով, բացի օրենսդրությամբ ամրագրված գործառույթներից, Ծրագիրն իրականացվում է նաև մրցակցության կարգավորման հետևյալ մեխանիզմների կիրառմամբ.

1. Տնտեսվարող սուբյեկտների կողմից Հանձնաժողովին դիմելու նպաստավոր պայմանների և վստահության մթնոլորտի ձևավորում՝ Օրենքի խախտման վերաբերյալ ստացված դիմումներին, ահազանգերին, զանգվածային լրատվության միջոցների հրապարակումներին օպերատիվ արձագանքելով (ներառյալ կանխարգելիչ միջոցառումները) և ձեռնարկված միջոցների մասին հանրությանն իրազեկելով:

2. Օրենքի խախտման համար պատասխանատվության ենթարկվելու անխուսափելիության մթնոլորտի ձևավորում՝ Հանձնաժողովի կողմից տնտեսվարող սուբյեկտների նկատմամբ պարտավորություններ առաջացնող կամ պատասխանատվություն սահմանող որոշումների կատարման նկատմամբ մշտական հսկողության իրականացմամբ:

3. Համագործակցություն՝

- պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների հետ,
- համապատասխան հասարակական և միջազգային կազմակերպությունների հետ, որոնց նպատակն է տնտեսական մրցակցության բարենպաստ միջավայրի ձևավորումը:

4. Պետական կառավարման մարմինների կողմից մշակված և տնտեսական մրցակցության հարցերին առնչվող իրավական ակտերի նախագծերի, ինչպես նաև պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ընդունված իրավական ակտերի վերաբերյալ Հանձնաժողովի եզրակացությունների ներկայացում:

5. Հանձնաժողովի գործունեության թափանցիկության ապահովում՝ պաշտոնական տեղեկագրերի հրատարակման, պաշտոնական ինտերնետային կայքի սպասարկման, մամուլի ասուլիսների, ՋԼՄ-ների հետ համագործակցության, Օրենքի դրույթների, դրանց խախտման հետևանքների, Հանձնաժողովի իրավասությունների և գործառույթների, քննարկվող հարցերի, ընդունվող որոշումների, իրականացվող ծրագրերի և օպերատիվ ուսումնասիրությունների, դրանց արդյունքների վերաբերյալ հասարակության իրազեկման միջոցով:

6. Դատավորների և դատական ծառայողների տեղեկացվածության բարձրացում՝ միջազգային փորձագետների և Հանձնաժողովի համապատասխան մասնագետների մասնակցությամբ մրցակցային քաղաքականության իրականացման վերաբերյալ կազմակերպվող սեմինարների միջոցով:

IV. Օրենքով սահմանված խնդիրների և գործառույթների իրականացման համար Հանձնաժողովի կողմից սահմանված անհրաժեշտ այլ դրույթներ

Հանձնաժողովի գործունեության մեջ առանձնակի տեղ են զբաղեցնում այլ երկրների մրցակցային կամ հակամենաշնորհային մարմինների հետ համագործակցությանն ուղղված աշխատանքները: Ռազմավարական հիմնախնդիրների լուծմանը և մրցակցության պաշտպանության զարգացմանը նպաստելու առումով համագործակցությունն իրականացվելու է հետևյալ ուղղություններով.

- համագործակցություն ինստիտուցիոնալ զարգացման նպատակով,
- համագործակցություն տնտեսական մրցակցության օրենսդրությունը միջազգային չափորոշիչներին և մեխանիզմներին համապատասխանեցնելու նկատառումով՝ ներառելով ժամանակակից մարտահրավերի հրամայականները,

- արտերկրյա մրցակցային մարմինների հետ համատեղ ուսումնասիրությունների իրականացում,
- փորձի փոխանակում և լավագույն փորձի կիրառում,
- մասնագետների որակավորման բարձրացում:

Հանձնաժողովի գործունեության տարեկան ծրագրով նախատեսվում է նպաստել Հայաստանի Հանրապետության կողմից ստորագրված՝ միջազգային պայմանագրերով սահմանված, տնտեսական մրցակցության բնագավառին առնչվող պարտավորությունների կատարման արդյունավետության բարձրացմանը, ինչպես նաև անհրաժեշտ պայմանների ստեղծմանը՝ տնտեսական համագործակցության զարգացման և Եվրոպական Միության ու շահագրգիռ գործընկերների միջև խորը տնտեսական ինտեգրման համար:

Տարվա ընթացքում միջազգային գործունեությունը և համագործակցությունը հիմնականում նպատակաուղղվելու են Առևտրի համաշխարհային կազմակերպության (WTO), ՀՀ-ԵՄ Գործընկերության ու համագործակցության համաձայնագրի (ENP), Արևելյան գործընկերության շրջանակում փոխադարձ պարտավորությունների կատարմանը և սկզբնական կապերի ամրապնդմանը:

Ռազմավարական խնդիրների իրագործման ընթացքում Հանձնաժողովն իր ջանքերը նպատակաուղղելու է միջազգային կառույցների և կազմակերպությունների անդամակցության շրջանակում հարաբերությունների զարգացման ուղղությամբ, որոնք կարևոր դեր ունեն ամբողջ աշխարհում տնտեսական մրցակցության համընդհանուր քաղաքականության, համագործակցության և փոխըմբռնման նոր հարաբերությունների ձևավորման խնդրում: Բազմակողմ համագործակցության շրջանակներում Հանձնաժողովը շարունակելու է մասնակցել Միջազգային մրցակցության ցանց (ՄՄՑ/ICN), ԱՊՀ անդամ պետությունների հակամենաշնորհային քաղաքականության միջպետական խորհրդի (ՀՔՄԽ/MCAPI), Տնտեսական համագործակցության զարգացման կազմակերպության և ՄԱԿ-ի առևտրի և զարգացման հարցերով համաժողովի (ՄԱԱԶՀ/UNCTAD) տարեկան նիստերին և հանդիպումներին, ինչպես նաև աշխատանքային խմբերի ընթացիկ աշխատանքներին: Այս համագործակցության արդյունքում ձևավորվում և հաստատվում են մրցակցության քաղաքականության կիրարկման և օրենսդրությունների համապատասխանեցման առումով համատեղ գործողությունների շրջանակները, լավագույն փորձը և համատեղ ուսումնասիրությունների իրականացման մեխանիզմները: Միաժամանակ, Հանձնաժողովը տարբեր միջազգային համաժողովների և սեմինարների

ընթացքում ներկայացնելու է տնտեսական մրցակցության բնագավառում պետական քաղաքականության իրականացման վերջին զարգացումները, ինչը տարբեր միջազգային կառույցներին հնարավորություն կտա համարժեք գնահատելու երկրում մրցակցային իրավիճակի վարկանիշը:

Հանձնաժողովը, տարեկան գործունեության միջոցառումների իրագործման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով շարունակելու է ակտիվ համագործակցությունը միջազգային դոնոր կազմակերպությունների և կառույցների հետ: Մասնավորապես, Հանձնաժողովը մշակելու է համագործակցության նոր ծրագրեր և հստակեցնելու է տեխնիկական աջակցության այն ծրագրային ուղղությունները, որոնք արդեն իսկ իրագործման փուլում են: Մասնավորապես՝

- Թվինինգ ծրագրային գործիքի կիրառման ներքո 2011-2012 թվականներին իրականացնելու է «Մրցակցային և պետական օժանդակության օրենսդրության կիրարկման հզորացումը Հայաստանում» ծրագիրը, ինչը օգնելու է երկարատև հարաբերություններ հաստատել ԵՄ անդամ երկրների՝ Գերմանիայի Դաշնության և Լիտվայի Հանրապետության մրցակցային մարմինների հետ: Ծրագրային դրույթների իրականացումը նպաստելու է տարեկան գործունեության ծրագրի հիմնական խնդիրների իրագործմանը: Համագործակցությունը շարունակվելու է նաև մրցակցության պաշտպանության քաղաքականության կիրարկման քարոզչությանն ուղղված միջոցառումների, աշխատակազմի կարողությունների զարգացման և կառույցի առավել թափանցիկ գործունեության խթանման ուղղությամբ, ինչպես նաև՝ հանրապետությունում տնտեսական մրցակցության պաշտպանության օրենսդրության և վերջինիս կիրարկման մեխանիզմների կատարելագործմանը՝ ԵՄ չափանիշներին համահունչ:
- Երկրի գործընկերության ռազմավարության շրջանակներում տնտեսության զարգացմանն ուղղված ծրագրային ուղղություններից ելնելով՝ Հանձնաժողովը նախատեսում է Համաշխարհային բանկի (ՀԲ/ՄԲ) հետ իրագործել համատեղ ծրագիր: Հանձնաժողովին տրամադրվող աջակցությունը նախատեսվում է իրականացնել Հայաստանի Հանրապետությանը տրամադրվող վարկի շրջանակներում՝ խթանելու Հայաստանում տեղեկատվական հասարակության, նորամուծություններ

ստեղծելու և մրցունակությունը բարձրացնելու համար: Ծրագիրը գտնվում է նախապատրաստական փուլում. հստակեցվում են ծրագրային դրույթները, նախատեսվում է իրագործել 2011 թվականին:

- Հանձնաժողովը ծրագրային տարում նախատեսում է շարունակել ակտիվ համագործակցությունը Եվրոպայի անվտանգության և համագործակցության կազմակերպության հետ (ԵԱՀԿ/OSCE)՝ փոխըմբռնման և համագործակցության հուշագրի շրջանակներում, ինչը կնպաստի Հանձնաժողովի միջազգային հեղինակության բարձրացմանը՝ Հայաստանի Հանրապետությունում մրցակցային մշակույթի ձևավորման և մրցակցության կարգավորման գործընթացին համընթաց:
- Հանձնաժողովը Գերմանիայի տեխնիկական համագործակցության (ԳՏՀ/GTZ) ընկերության հետ՝ «Մասնավոր հատվածի զարգացումը Հարավային Կովկասում» ծրագրի ներքո, ընդլայնելու է համագործակցությունը մրցակցության քաղաքականության կիրարկման բարելավմանն ուղղված համատեղ գործողությունների ծրագիր իրականացնելու առումով, որի հիմնական ուղղություններն են՝ մրցակցության օրենքի որոշ դրույթների բարեփոխման առաջարկների տրամադրում, գործերի վարման շուրջ միջազգային փորձագետի խորհրդատվություն, Հայաստանի Հանրապետությունում մրցակցության քաղաքականության մասին տեղեկացվածության բարձրացում, ոլորտային կարգավորողների միջև համագործակցության համապատասխանեցում Եվրամիության չափանիշներին, ինչպես նաև Հանձնաժողովի աշխատակիցների համար դասընթացների կազմակերպում:
- Ծրագրային տարում, հաշվի առնելով նախորդ տարիների Ամերիկայի Միացյալ Նահանգների Միջազգային զարգացման գործակալության (ԱՄՆ ՄԶԳ/USAID) հետ համագործակցության դրական արդյունքները և ձեռքբերումները, Հանձնաժողովը ներկա փուլի հիմնախնդիրներից ելնելով և առաջացող նոր խնդիրներին միջազգային չափանիշներին համապատասխան լուծումներ տալու նպատակով, առաջիկա տարիների համար նախատեսում է մշակել և իրագործել ինստիտուցիոնալ զարգացման նոր համատեղ ծրագիր:

Միաժամանակ, շարունակվելու է համագործակցությունն արտերկրյա մրցակցային մարմինների հետ՝ վերապատրաստման, գործերի ուսումնասիրության ընթացքում փորձագետների ներգրավման, փորձի և տեղեկատվության փոխանակման նպատակով: Հանձնաժողովն ակտիվորեն մասնակցելու է նաև միջազգային համաժողովներին, սեմինարներին, ամրապնդելու է այլ երկրների համանման կառույցների հետ համագործակցությունը՝ մրցակցության զարգացմանը խոչընդոտող արդի խնդիրների քննարկման և միջազգային չափորոշիչներին համապատասխան մոտեցումներ որդեգրելու նպատակով: Ավելին, 2011 թվականին նախատեսվում է կազմակերպել միջազգային համաժողով՝ նվիրված Հանձնաժողովի հիմնադրման 10-րդ տարեդարձին՝ նպատակ ունենալով բարձրացնելու մրցակցային օրենսդրության կիրառման վերաբերյալ իրազեկվածությունը, ներկայացնելու Հայաստանի Հանրապետությունում շուկայական տնտեսությանն անցման շրջանում իրականացվող բարեփոխումների գործընթացը, ինչպես նաև՝ ձևավորելու հստակ մոտեցումներ առ աջիկա տարիների համար: